ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«13» Նոյեմբերի 2017 թվականի № 135-Ն

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» 2017թ-ի սեպտեմբերի 14-ի թիվ ԲՓ-81 և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից տրված՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» 2017թ-ի սեպտեմբերի 05-ի թիվ 1852 փորձաքննությունների դրական եզրակացությունները, <Հանրապետական Երկրաբանական Ֆոնդ> ՊՈԱԿ-ի 2017թ-ի հուլիսի 14-ի Ֆ-211/17 և սեպտեմբերի 28-ի Ֆ- 280/17 գրությունները և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԱՐՍՔԱՐ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն)՝ 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/571 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Ջերմուկի բազալտի հանքավայրի՝ 1.X=4411881 Y=8555581, 2.X=4411989 Y=8555617, 3.X=4412006 Y=8555683, 4. X=4411877 Y=8555661, (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) եզրագծված տարածքում արդյունահանման աշխատանքներ կատարելու համար, հատկացնելով՝ 148 100մ^3 B կարգով բազալտի պաշար և լեռնահատկացման թիվ Լ-571 ակտը՝1.X=4411881 Y=8555581 H=2271.0(h=-20.0), 2.X=4411989 Y=8555617 H=2271.7 (h=-18.2), 3.X=4412006 Y=8555683 H=2266.0(h=-12.5), 4.X=4412025 Y=8555687 H=2264.0(h=0), 5.X=4412025 Y=8555698 H=2260.0(h=0), 6.X=4411975 Y=8555698 H=2258.0(h=0), 7.X=4411962 Y=8555695 H=2258.0(h=0), 8.X=4411944 Y=8555689 H=2258.0(h=0) 9.X=4411877 Y=8555661 H=2258.0(h=-5.5) (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) եզրագծված 1,03 հա տարածքով:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 2707մ^3 մարվող պաշար:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Ջերմուկի բազալտի հանքավայրի ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-571 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), ծանուցել դիմումատուին՝ 5 օրվա ընթացքում ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման մասին և հրավիրել վերջինիս 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու մասին.

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը (օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի տրամադրման թույլտվություն, լեռնահատկացման ակտ, պայմանագիր).

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ